որ եմ յետին ամենեցուն, բայց ոչ ի սիրելոյ զսիրելիդ իմ ի Քրիստոս.

Յիսուսի ծառայ անպիտան
Նուաստ Արութիւն տի Պետան.

17 $\frac{\text{ԻԲ}}{11}$ 72

ի Կոստանդնուպօլիս

Հասցէ ի ձեռս Տեառն Սարգսի Շնորհնալի Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցի Սուրբ Աթոռի օղոնս հրչակեցեալոյ բազում բարոյութեամբ:

Դարձիական նամակ
Դուցէ ձեռամբ Սամուէլ վարդապետի

Ի Մարշիլիա, կամ ի ուրբն հոմ
ես կամ ոնդ ես իցէ:

Սարգսի Կ. Պոլսէն մեկնելէն ետեւ՝ իրեն հաւատակից բարձրաստիճան եկեղեցականներէն երեքն անոր ետեւէն գացին: Առաջինն եղաւ Սամուէլ Եպ. Երզնկացի, Առաջնորդն Պրուսայու, որ 4 Դեկտ. 1772ին փախաւ գնաց Հռոմ, ինչպէս տեսանք:

Այնուհետեւ մեկնեցաւ Գրիգոր Պատրիարք Պասմաճեան: Ասոր վարուց մասին հետեւեալ տեղեկութիւնները քաղած եմ, եւ վերջնականապէս ստուգած անոր մահուան թուականն ու տեղը:

Գրիգոր Ծ. Վ. Պասմաճեան կամ Ասոռաճարբեան, Պատրիարքն Կ. Պոլսոյ, ծնած 1715ին ի Կ. Պոլիս, էր թոռն Սամաթիոյ "Ս. Գէորգայ եկեղեցւոյ Աւագերէց Տէր Մովսէս քահանայի", որուն եղբայրն էր Տէր Մարտիրոս քահանայ, եւ ասոնց սերունդէն մէկ դարու մէջ